ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«03» մայիսի 2017 թվականի№ 64-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով պետական ընդերքաբանական փորձաքննությոն 2015թ նոյեմբերի 13-ի N 12 եզրակացությունը ինչպես նաև ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը, հանքավայրի շահագործման նախագծի «շրջակա միջավայրի վրա ազդեցության» և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՍԱՄՎԵԼ-ԱՐՏՅՈՄ» ՍՊ ընկերության ՀՀ Արարատի մարզի Արտավազդի օնիքսանման մարմարի, տրավերտինի և գունավոր փշրաքարերի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում (ՇԱԹ-29/237 թույլտվություն, Պ-237 ընդերքօգտագործման պայմանագիր, Լ-237 լեռնահատկացման ակտ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1) 2012թվականի դեկտեմբերի 10-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹ-29/237թույլտվությունում՝ ընդերքօգտագործողի պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը տողում <03 Ա235341 05.04.2012թ> բառերը փոխարինել <03 Ա235341 25.03.2016թ>բառերով.

1.2) տրամադրված պաշարների քանակը ըստ կարգերի տողում <օնիքսանման մարմար-60.5 հազ. մ^3 մարվող պաշար, տրավերտին -965.6հազ. մ^3 մարվող պաշար> բառերը փոխարինել <942 հազ մ^3 B+C$_1$ կարգի> բառերով.

1.3) հանքի տարեկան արտադրողականությունը տողում <օնիքսանման մարմար-1748.5 մ^3 մարվող պաշար, տրավերտին 19312մ^3 մարվող պաշար> բառերը փոխարինել <18840 մ^3 մարվող պաշար> բառերով

1.4) օգտակար հանածոյի անվանումը տողում <օնիքսանման մարմար, տրավերտին> բառը փոխարինել <տրավերտին> բառով.

1.5) օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը տողում <ՀՀ Արարատի մարզի Արտավազդի օնիքսանման մարմարների տրավերտինի և գունավոր փշրաքարերի հանքավայր> բառերից հետո ավելացնել <տրավերտինի հյուսիս-արևմտյան տեղամաս> բառերը:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-237 պայմանագրի 2.1 կետի 1-ին պարբերության՝

- <19312.0 մ^3 տրավերտին, իսկ 15.4 տարուց սկսած /34.6/տարի տարեկան՝ 1748.5 մ^3> բառերը փոխարինել <18840 մ^3> բառերով,

- <ՀՀ Արարատի մարզի Արտավազդի օնիքսանման մարմարների, տրավերտինի և գունավոր փշրաքարերի հանքավայրի> բառերից հետո ավելացնել <տրավերտինի հյուսիս-արևմտյան տեղամաս> բառերը

- Հաշվեկշռային պաշարների օգտագործման ամբողջ ժամկետի համար <965.6 հազ.մ^3 տրավերտին և 60500.0 մ^3 օնիքսանման մարմար> բառերը փոխարինել <942.հազ մ^3 տրավերտին> բառերով:

- բլոկների ելքը տողում<21.6%>բառերը փոխարինել<32%>բառերով

3.Լեռնահատկացման ակտում՝ Սույն ակտը հավաստում է տողում <ՀՀ Արարատի մարզի Արտավազդի օնիքսանման մարմարների, տրավերտինի և գունավոր փշրաքարերի հանքավայրի>բառերից հետո լրացնել<տրավերտինի հյուսիս-արևմտյան տեղամաս>բառերը:

4. Ընդերքի գործակալության պետին՝

4.1) Ապահովել «ՍԱՄՎԵԼ-ԱՐՏՅՈՄ»ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների կատարումը

4.2)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ